ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ Վ. Հ. Գալոյան

Digitally signed by GALOYAN VARDUHI
7705800268
Date: 2023.09.22 12:54:38 AMT

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Յոթերորդ դասարան

Պետրոսյան Սուսաննա Հայկի

«2023- 2024» ուսումնական տարի

ԴԱՍՂԵԿԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Դաստիարակչական աշխատանքներ իրականացնելու ընթացքում դասղեկը կատարում է՝

• կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների՝ (փոխհարաբերություններ աշակերտների միջև, աշակերտների և ուսուցիչների միջև, ներդասարանական, միջդասարանական փոխհարաբերություններ) վերլուծություն, համակարգում, կարգավորում,

• դասարանական կոլեկտիվի կենսագործնեության փուլերի (կիսամյակ և այլն) և միջոցառումների (դասղեկական ժամեր, տեղեկատվական բոպեներ, ստեղծագործական միջոցառումներ, մրցույթներ, ցուցահանդեսներ և այլն) պլանավորում, նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամփոփում, վերլուծություն,

• աշխատանք ծնողների հետ,

• Մանկավարժական աջակցություն աշակերտական ինքնավարության դասարանական մարմնին,

• աշակերտական օրագրերի և այլ փաստաթղթերի վարման կազմակերպում:

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրությունը

<u>Ուսումնական տարվա սկզբին</u>

• Կազմում է աշակերտների ցուցակը և ձևավորում կազմակերպչական անկյուն (սեպտեմբեր, առաջին շաբաթ):

• Կազմակերպում է դասագրքերի ստացումը գրադարանից (սեպտեմբեր, առաջին շաբաթ):

• Ուսումնասիրում է աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները (առաջին քառորդ):

• Հավաքում է սպառիչ տեղեկություններ՝ լրացուցիչ կրթության հաստատություններում, դասարանի աշակերտների մասնակցության մասին (հոկտեմբեր):

• Աշակերտների շրջանում՝ նրանց ընդունակությունները զարգացնելու նպատակով, աշխատանք է տանում՝ բազմազան գործունեության ոլորտում (այդ թվում՝ լրացուցիչ կրթության) նրանց ներգրավելու համար (առաջին քառորդ):

• Աշակերտների հետ համատեղ կազմակերպում է դասարանի կենսագործունեության պլանի ձևավորում:

• Կազմում է դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը, համաձայնեցնում է այն դաստիարակության գծով փոխտնօրենին (սեպտեմբեր):

Ամենօրյա աշխատանք

• Էլեկտրոնային դասամատյանում ստուգում է բացակայությունները

• Հետևում է աշակերտների արտաքին տեսքի պատշաճությանը և բարեկիրթ վարքին:

• Հետևում է դասարանում հերթապահության կազմակերպմանը:

Ամենշաբաթյա աշխատանք

• Աշակերտների օրագրերի ստուգում:

• Էլեկտրոնային դասամատյանի վարման վերահսկողություն:

• Դասղեկական ժամի վարում

• Դպրոցի, դասարանի վերահսկողությանն հանձնված տարածքի մաքրության վերահսկում:

• Այլ պլանավորված աշխատանքների կատարում:

Ամենամսյա աշխատանք

• Դասարանի կոլեկտիվը նախապատրաստում է, կազմակերպում է՝ համադպրոցական գործընթացներին մասնակցելու համար:

• Օգնում է դասարանական խորհրդին ամփոփելու դասարանի կենսագործունեությանփուլերի աշխատանքը:

• Պարապմունքներ է անցկացնում՝ ճանապարհային եթևեկության, անվտանգ կենսագործունեության կանոնների համար:

• Կազմակերպում է դասարանին հատկացված դպրոցական տարածքի ամենամսյա մաքրում:

• Հերթապահում է համադպրոցական միջոցառման ժամանակ (ըստ հերթապահության գրաֆիկի):

• Վերահսկում է իր դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում, խորհուրդներում:

Ուսումնական քառորդի ընթացքում

• Օգնում է դասարանական խորհրդին կազմակերպել դասարանի կենսագործունեությունը (ընթացիկ պլանավորում, աշխատանքների կազմակերպում, քննարկում):

• Կազմակերպում է դասարանի հերթապահությունը դպրոցում (գրաֆիկի համաձայն):

• Հետևում է դասագրքերի պահպանմանը:

• Ճշտում է իր դասարանի աշակերտների՝ լրացուցիչ կրթության օղակներում մասնակցության մասին տեղեկությունները:

• Վարում է մանկավարժական խորհրդատվություն:

• Վարում է ծնողական ժողովներ:

• Կազմակերպում է ծնողական խորհրդի աշխատանքները, համաձայն վերջինիս պլանի:

Կիսամյակի վերջում

• Կազմակերպում է ուսումնական կիսամյակում դասարանի կրթադաստիարակչական

կենսագործունեության արդյունքների ամփոփումը:

• Դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենին ներկայացնում է էլեկտրոնային դասամատյանը և հաշվետվություն դասարանի առաջադիմության մասին

Ուսումնական տարվա վերջում

• Դասարանի ակտիվի հետ համատեղ, նախապատրաստում է դասարանի կենսագործունեության վերաբերյալ հաշվետվություն և կազմակերպում է ակտիվի վերընտրություն:

• Կատարում է (պատրաստում է) դասարանի կրթադաստիարակչական աշխատանքի ամփոփիչ վերլուծություն (ըստ հաշվետվության ձևի) և հանձնում է դպրոցի դաստիարակության գծով փոխտնօրենին:

• Կազմակերպում է դասագրքերի հանձնումը գրադարան:

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) 2023- 2024 ուստարում 7-րդ դասարանում սովորում են 12 աշակերտներ: 2022-2023 ուսումնական տարին աշակերտները ավարտել են հետևյալ առաջադիմությամբ՝ գերազանց՝ 1 աշակերտ, հարվածային՝ 2 աշակերտ, միջակ՝ 9 աշակերտ: Ընդհանուր առմամբ բոլորն ունեն լավ ընդունակություններ, սակայն որոշ աշակերտներ չեն աշխատում իրենց ընդունակությունների չափով: Դասարանում կան տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտներ: Աշակերտները համախմբված են: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն սովորողների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկվեն այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1. Հոգևոր դաստիարակություն

Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոն-ներ: Աշակերտների մոտ սերմանել սեր և ակնածանք կյանքի հոգևոր արժեքների նկատմամբ, որ կարողանան սահմանազատել հոգևոր և նյութական արժեքները: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2. Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակությունը մանկավարժների համատեղ գործունեության գործընթացն է՝ ուղղված դպրոցականների գեղագիտական կուլտուրայի ձևավորմանը: Ֆիլմերի, արվեստի երկե-

րի, առարկաների ու երևույթների միջոցով բացատրել և վերլուծել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Լսել աշակերտների կարծիքները այդ նյութի վերաբերյալ:

3.3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն է աշակերտների մոտ սեր արթնացնել հայրենիքի, նրա սահմանները ամուր պահելու նկատմամբ: Հաճախակի կազմակերպել հայրենասիրական թեմաներով քննարկումներ, խրախուսել աշակերտների մասնակցությունը դպրոցում կազմակերպվող ռազմահայրենասիրական միջոցառումներին:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիական դաստիարակությունը հանդիսանում է դաստիարակության կարևոր բաղադրամաս և մեծ նշանակություն ունի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար: Դասապրոցեսին և արտադասարանական պարապմունքներին նպաստել սովորողների մասնակցության ակտիվությանը՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնակատկությունները: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5. Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը նպաստում է աճող սերնդի ճիշտ զարգացման հիմնախնդրի լուծմանը: Աշխատանքային դաստիարակության նպատակները բազմազան են, ուստի և պետք է յուրաքանչյուր երեխայի հանդեպ ցուցաբերել անհատական մոտեցում:

3.6. Բնապահպանական դաստիարակություն

Մարդկային քաղաքակրթության պատմությունը թևակոխել է մի այնպիսի ժամանակաշրջան, որի կարևորագույն և բնորոշ դրսևորումներից մեկը ահագնացող գլոբալ տեխնածին գործընթացներն են, ուստի և հարցը շատ կարևոր է: Բնության գեղեցկությունն ու դերը կյանքում գնահատելու և արժևորելու համար անհրաժեշտ է կազմակերպել էքսկուրսիաներ և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի շարք խնդիրներ , որոնք առկա են շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Մասնակցել կանաչապատման աշխատանքներին

3.7. Դպրոց-ընտանիք կապը

Կարևորագույն հիմնախնդիր է դպրոց-ընտանիք կապի մշտապես պահպանումը, քանզի մեկն առանց մյուսի չի կարող լիարժեք դրսևորվել, դրանք լրացնում են միմյանց և երկուստեք գործելու դեպքում արդյունքն ակնհայտ կլինի:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական Շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարողներ
	Ծնողական ժողով, որի նպատակն է ծնողներին տեղյակ պահել նոր ուսումնական տարվա կազմակերպման, նոր դասագրքերի, նոր մարտահրավերների և պահանջների մասին:	Օգոստոսի 31	Դասղեկ, Աշակերտներ, Ծնողներ
	«Գիտելիքի օր» համադպրոցական միջոցառում	01/09	Դասղեկ, աշակերտներ, ԴԱԿ
I	Ձևավորել կազմակերպչական անկյուն, ընտրել դասարանի ակտիվ	04/09 - 08/09	Դասղեկ, աշակերտներ
II	Կազմակերպչական հարցեր. «Կարգ ու կանոնը մեզ համար է» թեմայով զրույց անցկացնել	11/09 - 15/09	Դասղեկ, աշակերտներ
III	« Ազատ թևածիր, Հայաստան աշխարհ» թեմայով զրույց՝ նվիրված անկախության 32 ամյակին: «Մենք խաղաղություն ենք ուզում. թող լինի այն ողջ աշխարհում»	18/09 - 22/09	Դասղեկ, աշակերտներ
IV	«Ո՞վ եմ ես և ինչպիսի՞ն եմ» թեմայով զրույց-քննարկում անցկացնել:	25/09 - 29/09	Դասղեկ, աշակերտներ
V	« Ի՛մ ուսուցիչ, դու լույս ես ճառագող», «Գրադարանավարի օր» թեմաներով զրույց անցկացնել: Շնորհավորանքներ կրթության զինվորներին:	02/10-06/10	Դասղեկ, աշակերտներ
VI	« Ինչպես վարվել կոնֆլիկտային իրավիճակներում», «Ի՞նչ է կոնֆլիկտը» թեմաներով զրույց անցկացնել	09/10-13/10	Դասղեկ, աշակերտներ
VII	«Ինչպես եմ կազմակերպում իմ կյանքը» թեմայով քննարկում	16/10-20/10	Դասղեկ, աշակերտներ
VIII	«Ընկերն ու բարեկամը» թեմայով զրույց իսկական ընկերասիրության և բարեկամության մասին	30/10-03/11	Դասղեկ, աշակերտներ
IX	«Հեռու մնանք վնասակար սովորություններից » թեմայով զրույց անցկացնել	06/11-10/11	Դասղեկ, աշակերտներ
X	Մեդիագրագիտության շաբաթ: Համակարգիչն ընկեր, թե՞ թշնամի:	13/11-17/11	Դասղեկ, աշակերտներ
XI	Կազմակերպչական հարցեր. Խթանել ուսման առաջադիմությունը, ամրապնդել դպրոց- ծնող կապը	20/11-24/11	Դասղեկ, աշակերտներ
XII	«Առողջ մարմնում առողջ հոգի» թեմայով զրույց: Մեր վատ սովորությունները և պայքարը դրանց դեմ	27/11-01/12	Դասղեկ, աշակերտներ
XIII	«Ինչպես պաշտպանվել բնական աղետ-	04/12-08/12	Դասղեկ,

	ներից» թեմայով զրույց անցկացնել		աշակերտներ
XIV	«Օրենքի առաջ բոլորն են հավասար », «Իմ իրավունքներն ու պարտականությունները» թեմաներով զրույց	11/12-15/12	Դասղեկ, աշակերտներ
XV	Վերլուծել և ամփոփել 1-ին կիսամյակի արդյունքները՝ շտկել թերությունները: Ամանորյա և Սուրբ Ծննդյան հեքիաթ	18/12-22/12	Դասղեկ, աշակերտներ
	2 – ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ		
XVI	2-րդ կիսամյակի խնդիրների քննարկում Սովորենք լավ, ուսման մեջ առաջադիմենք, որ կյանքում ճիշտ կողմնորոշվենք	08/01-12/01	Դասղեկ, աշակերտներ
XVII	«Իմ շրջապատն ու ես» թեմայով զրույց քննարկում անցկացնել: Ակտիվություն ցուցաբերել համագործակցելիս	15/01-19/01	Դասղեկ, աշակերտներ
XVIII	«Մարդիկ, որոնց հանդիպում եմ ամեն օր» թեմայով զրույց: Գիտակցել կրթության ու գիտելիքի արժեքը:	22/01/26/01	Դասղեկ, աշակերտներ
XIX	«Զորավիգ լինենք հայ զինվորին և հայոց բանակին» թեմայով զրույց	29/01-02/02	Դասղեկ, աշակերտներ
XX	«Հետաքրքրությունը լա՞վ հատկանիշ է, թե…» թեմայով զրույց անցկացնել:	05/02-09/02	Դասղեկ, աշակերտներ
XXI	Հայկական ավանդույթներն ու ծեսերը: Ազգային կրոնական արժեքների արժեվորում: Զրույց «Տեառնընդառաջ» թեմայով	12/02-16/02	Դասղեկ, աշակերտներ
XXII	«Անաղարտ պահենք Մայրենին», «Եկե՛ք խոսենք հայերեն»: Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյան:	19/02-23/02	Դասղեկ, աշակերտներ
XXIII	Մարտի 1-ը քաղպաշտպանության օրն է: Ծավալենք անվտանգ կենսագործունեություն	26/02-01/03	Դասղեկ, աշակերտներ, զինղեկ
XXIV	«Մեր սիրելի մայրեր, քույրեր…» թեմայով ստեղծագործական շարադրանք գրել	04/03-08/03	Դասղեկ, աշակերտներ
XXV	«Ինձ համար ամենաթանկ բանն աշխարհում» թեմայով զրույց-քննարկում անցկացնել	11/03-15/03	Դասղեկ, աշակերտներ
XXVI	Թիմային աշխատանք . «Ուս ուսի տանք, սարեր շուռ կտանք»	18/03-22/03	Դասղեկ, աշակերտներ
XXVII	«Ժպիտն ու ծիծաղը մեր կյանքում» թեմայով զրույց անցկացնել	01/04-05/04	Դասղեկ, աշակերտներ
XXVIII	«Բնությունն ու մարդը» թեմայով զրույց անցկացնել՝ նվիրված բնության պահպանությանը: Ավետման /մայրության և գեղեցկության/ տոն,	08/04-12/04	Դասղեկ, աշակերտներ
XXIX	«Մեր պետական խորհրդանիշները» թեմայով զրույց անցկացնել	15/04-19/04	Դասղեկ, աշակերտներ
XXX	«Ասենք ո՛չ ցեղասպանությանը» թեմայով	22/04-26/04	Դասղեկ,

	զրույց անցկացնել՝ նվիրված ցեղասպանության 109-ամյակին		աշակերտներ
XXXI	«Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն» թեմայով զրույց անցկացնել՝ նվիրված աշխատավորների համերաշխության միջազգային օրվան:	29/04-03/05	Դասղեկ, աշակերտներ
XXXII	«Իմ հայրենիքի պատմության հերոսական էջերը» թեմայով զրույց անցկացնել: Ընտանիքի դերն ու նշանակությունը մեր կյանքում	06/05-10/05	Դասղեկ, աշակերտներ
XXXIII	Կիսամյակային և տարեկան գնահատականների նախնական ամփոփում:	13/05-17/05	Դասղեկ, աշակերտներ
XXXIV	«Ինչ սովորեցինք այս տարի», «Ինչ եմ անելու ամառային արձակուրդներին» թեմայով զրույց անցկացնել: Ամփոփել ուսումնական տարին, ամառային արձակուրդներին հանձնարարել գրքեր կարդալ:	20/05-24/05	Դասղեկ, աշակերտներ